



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

21.06.2018թ. N

### Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ե Ր Ձ

Առողջապահության ոլորտի հարգելի աշխատակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա առթիվ: Ձեր ամենօրյա նվիրված աշխատանքի շնորհիվ կյանքեր են փրկվում, բարձրանում է մարդկանց կյանքի որակը: Դժվար է գտնել ավելի պատասխանատու և ավելի մարդասիրական մասնագիտություն: Բժշկությունը միայն մասնագիտություն չէ, այն առաքելություն է:

Ցավոք, այսօր մենք ստիպված ենք արձանագրել, որ առողջապահության ոլորտում մասնավորապես Կոտայքի մարզում մենք ունենք բազմաթիվ խնդիրներ՝ բուժհաստատությունների շենքային պայմաններից մինչև տեխնիկական հագեցվածություն: Մենք պետք է գիտակցենք, որ առողջապահական համակարգի խնդիրները թեև շատ ինքնատիպ են՝ պայմանավորված Ձեր մասնագիտության բացառիկ դերով, սակայն դրանց լուծումն էլ է հնարավոր միայն մեր առաջ քաշած կոնցեպտի շրջանակներում: Այն է՝ Կոտայքի յուրաքանչյուր բնակչի վերափոխումը Քաղաքացու: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ստանձնի իր բաժին պարտականությունը և դնի իր քարը մեր պետականաշինության գործում: Յուրաքանչյուր կոտայքցի պետք է պատրաստ ինքը լինի՝ կառուցել իր երազած երկիրը և իր երազած առողջապահության համակարգը:

Սիրելի բուժաշխատողներ, ևս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեր մասնագիտական տոնը և հուսով եմ, որ դուք կլինեք այն շոգեքարշը, որը կտանի իր հետևից Կոտայքի բնակչից քաղաքացու վերափոխման գործընթացը՝ որպես ամենապատասխանատու և ամենամարդասիրական մասնագիտության կրողներ:

Հարգանքով՝



Ռ. Պեպրոսյան